# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.03.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ՍՑ-ԷՍ-2019/29

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1455-19 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 24.01.2019թ. թիվ 02/10/19 գրության հիման վրա, 05.02.2019թ. «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 24.01.2019թ. թիվ 02/10/19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով 13.12.2018թ. հայտարարվել է ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգ:

25.12.2018թ. գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստում, մրցույթի մասնակից «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը արձանագրվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլիտբաս» ՍՊԸ-ն: Առաջին տեղը զբաղեցնող մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, 08.01.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, խնդրում ենք՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:»:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էլիտբաս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 13.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Էլիտբաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձանժողովը որոշեց մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Էլիտբաս» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ՀՀՀ-

ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Աճուրդի գնահատող հանձնաժողովը՝ 25.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հայտնում ենք, որ սահմանված ժամկետում «Էլիտբաս» ՍՊԸ-ն, այն է՝ 28.12.2018թ., eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն անհասկանալի պայմաններում 28.12.2018թ. (ենթադրվում է, որ խնդիրը պայմանավորված է եղել 2018թ. վերջին աշխատանքային օրը էլեկտրոնային հարթակը ծանրաբեռնված աշխատելով) նամակը ուղարկվել է Պատվիրատուին՝ կցված փաստաթղթերի բացակայությամբ:

«Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կապ է հաստատել Աճուրդի քարտուղարի հետ և հայտնել, որ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կցվել, իսկ eauction.armeps.am համակարգը՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը այլևս հնարավորություն չի ընձեռում նորից ուղարկելու համար:

Վերոնշված խնդիրը հարթելու համար՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 28.12.2018թ. Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ի հավաստումն այն փաստի, որ փաստաթղթերը առկա են:

Ընկերությունը փաստաթղթերը 28.12.2018թ. ուղարկելով Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային հասցեին՝ կից ներկայացրել է նաև գրություն՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկելու անհնարինության մասին:

Սակայն գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն արձանագրվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի

գնահատող հանձանժողովը որոշել է մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և դա այն դեպքում, երբ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով հայտնել էր վերոնշված խնդիրների մասին:

Սակայն՝ 08.01.2019թ. Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ստանալով հայտը մերժելու մասին որոշումը՝ Ընկերությունը վերստին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այս դեպքում արդեն ուղեկցական գրությամբ և խնդրել գնահատող հանձնաժողովին վերանայել հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ն իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար և քանի որ աճուրդային համակարգը թույլ չի տվել ևս մեկ անգամ փաստաթուղթ կցել և ուղարկել, այդ իսկ պատճառով այն ուղարկվել է Պատվիրատուի էլ. հասցեին, արդյունքում ենթադրել ենք, որ գնահատող հանձնաժողովը կգնահատի էլ. հասցեին ուղարկված շտկված փաստաթղթերը:

Հարգելի պարոն Է. Սարգսյան, խնդրում ենք «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում մասնակիցը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ փաստաթուղթը գնահատող հանձնաժողովին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, սակայն համակարգի միջոցով փաստաթղթերը վերստին ուղարկելու հնարավորություն այլևս չի եղել և հենց այդ խնդրի պատճառով էլ այդ փաստաթղթերը երկրորդ անգամ հնարավոր չի եղել ուղարկել աճուրդի միջոցով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Աննա Անտոնյանը, Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2019/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1455-19 գրությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 24.01.2019թ. թիվ 02/10/19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 25.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 և 08.01.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից 13.02.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, բավարարում է ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 25.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 4-րդ կետով որոշել է Աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլիտբաս» ՍՊԸ-ին:

- 6-րդ կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 08.01.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել և որոշել է «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ սահմանված ժամկետում, այն է՝ 28.12.2018թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն անհասկանալի պատճառներով նամակը Պատվիրատուին ուղարկվել է կցված փաստաթղթերի բացակայությամբ, նույն օրը Ընկերության ներկայացուցիչը կապ է հաստատել Աճուրդի քարտուղարի հետ և հայտնել, որ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն կցվել, իսկ համակարգը այլևս հնարավորություն չի ընձեռում փաստաթղթերը կրկին ուղարկելու համար, այդ իսկ պատճառով Ընկերությունը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկել է Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ տեղեկանալով այն մասին, որ 08.01.2019թ. Հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է, կրկին պահանջվող փաստաթղթերը ուղարկել է Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Պատվիրատուին՝ 28.12.2018թ. և 08.01.2019թ. Աճուրդի քարտուղարի՝ hripsime.navasardyan@1tv.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղղարկված նամակների կարճապատկերումները (screenshots):

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 19.02.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության նպատակով

իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ համակարգում երևում է միայն այն, որ Ընկերությունը 28.12.2018թ. մի քանի անգամ մուտք է գործել համակարգ, սակայն այն հանգամանքը թե ինչու փաստաթղթերը չեն ներբեռնվել, համակարգում դա չի արտացոլվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝ 7.10 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝

համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

ա. առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)

դ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Էլիտբաս» ՍՊԸ-ն 28.12.2018թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն նամակն ուղարկվել է կցված փաստաթղթերի բացակայությամբ:

- «Էլիտբաս» ՍՊԸ-ն 28.12.2018թ. և 08.01.2019թ. որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկել է ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի քարտուղարի՝ hripsime.navasardyan@1tv.com էլեկտրոնային փոստի հասցեին:

- էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության կողմից 28.12.2018թ. մի քանի անգամ կատարվել է համակարգ մուտք գործելու գործողություն:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու միտում, քանի որ վերջինս Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.10 կետի 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունները կատարելու նպատակով ձեռնարկել է արձանագրված հնարավոր միջոցները և պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ուղարկել է ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված՝ hripsime.navasardyan@1tv.com էլ. փոստի հասցեին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

# Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1455-19 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**